



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԻՒՑ

ՀԳՄԾ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր

Այս թողարկման մեջ

1. ՀԳՄԾ-ն օժանդակում է քաղաքացիական հասարակության մասնակցությանը ՀՀ նոր հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործում
1. Ավարտված է հայտահրավերի ներկայացմանը նվիրված հանդիպումների առաջին շարքը
2. ՀԳՄԾ-ն համագործակցում է Վերահսկիչ պալատի հետ՝ Հայաստանի աուդիտային կարողություններն ընդլայնելու նպատակով
2. Գործում է ՀԳՄԾ-ի ինտերնետային կայքը
3. ՀԳՄԾ-ն իրազեկում է երիտասարդներին հակակոռուպցիոն պայքարի մասին
3. ՀԳՄԾ-ն վերանայել է Վերահսկիչ պալատի կարգավորիչ մեխանիզմները
4. ՀԳՄԾ-ն մասնակցում է Թբիլիսիում կայացած Հակակոռուպցիոն ցանցի հանդիպմանը
4. Հաջորդ թողարկման հիմնական բեմաները

Գործունեության լրատվաթերթիկ 2008թ. ապրիլ-հունիս 1-ին մաս 2-րդ թողարկում

ՀԳՄԾ-ն օժանդակում է քաղաքացիական հասարակության մասնակցությանը ՀՀ նոր հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործում

2007թ. ՀՀ կառավարությունը սկսել է նոր հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործընթացը: Նախորդ հակակոռուպցիոն ռազմավարության դրական ու բացասական կողմերն ուսումնասիրելուց հետո, կառավարությունն ու հանրությունն այժմ ընդունում են, որ ՀՀ նոր հակակոռուպցիոն ռազմավարության հաջողության գրավականը կլինի դրա թափանցիկությունը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մասնակցությունը ռազմավարության մշակման գործընթացում: Ա.թ. հունիսի 5-ին ՀԳՄԾ-ն, որն ի սկզբանե օժանդակել է նոր հակակոռուպցիոն ռազմավարության մշակմանը, դրամաշնորհ է տրամադրել Ինֆորմացիայի ազատության կենտրոնին (ԻԱԿ):



ՀԳՄԾ դրամաշնորհների գծով ղեկավար Նաիրա Գյուլնազարյանը, «ԻԱԿ»-ի նախագահ Շուշան Դոյրոյանը, ՀԳՄԾ Ծրագրի ղեկավար Ֆրանսուա Վեզինան և ՀԳՄԾ Հանրային կառավարման մասնագետ Գարիկ Խաչիկյանը ստորագրման արարողության ժամանակ:

Տե՛ս ՀԳՄԾ-ն օժանդակում է... 2-րդ էջում

Ավարտված է հայտահրավերի ներկայացմանը նվիրված հանդիպումների առաջին շարքը

Այս տարի ապրիլին ՀԳՄԾ-ն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար անցկացրել է հայտահրավերի ներկայացմանը նվիրված հանդիպումներ՝ ավարտելով մշակված հանդիպումների առաջին շարքը 4 մարզերում և Երևանում: Կապանում և Երևանում անցկացված հանդիպումների ժամանակ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ներկայացվել է տեղեկատվություն ՀԳՄԾ դրամաշնորհային երկու մրցույթների մասին. առաջինը՝ Շահերի պաշտպանության և օժանդակության կենտրոններ ստեղծելու համար, իսկ երկրորդը՝ Տարեկան ծրագրային հայտարարության (ՏԾՀ) համար: Վերջինս փոքր դրամաշնորհային ծրագիր է, որտեղ հայտատուները պետք է ներկայացնեն իրենց կողմից մշակված հակակոռուպցիոն ծրագրերը: Մարտ ամսին մեկնարկած հանդիպումների նպատակն է եղել ապահովել երկու դրամաշնորհային մրցույթներին ներկայացվող հայտերի բարձր որակը:



ՏԾՀ-ի/Հայտահրավերի ներկայացմանը նվիրված հանդիպում Կապանում

Կապանից ավելի քան 10 և Երևանից 57 ՀԳՄԾ-ի ներկայացուցիչներ օգտվել են ընձեռնված հնարավորությունից՝ ուղղելու իրենց հարցերն անմիջապես ՀԳՄԾ ներկայացուցիչներին և ծանոթանալու ՀԳՄԾ-ի ընթացիկ աշխատանքներին, ապագա դրամաշնորհային հնարավորություններին և համագործակցության հնարավոր ոլորտներին: ՀԳՄԾ-ի անձնակազմը ներկայացրել է Հայտահրավերը, այնուհետև հնարավորություն է տվել ուղղելու իրենց հետաքրքրող հարցերը: Մասնակիցների հարցերն ու պատասխաններն ընդգրկվել են www.maac.am ինտերնետային կայքում տեղադրված «Հաճախ տրվող հարցեր»-ի շարքում:

ՀԳՄԾ-ն ստացել և ուսումնասիրել է մեծ թվով հայտեր երկու դրամաշնորհների համար: Դրամաշնորհների տրամադրումը նախատեսվում է հաջորդ եռամսյակին:

ԱՄՆ ՄԶԳ
Հակակոռուպցիոն
գործողության
մոբիլիզացման
ծրագիր (ՀԳՄԾ)

Տեղյան 105/1,
804 սենյակ
ՀՀ, ք. Երևան, 0009

Հեռ.՝ +374 10 514835
Ֆաքս՝ +374 10 514836
Էլ. փոստ՝
info@maac.am
www.maac.am



Casals & Associates, inc

Նորթ Ֆեյրֆաքս 1199,
Երրորդ հարկ
ԱՄՆ, 22314, Ալեքսանդրիա

Հեռ.՝ 70 3 920 1234
Ֆաքս՝ 703 920 5750
Էլ. փոստ՝
info@casals.com
www.casals.com

Սույն լրատվաթերթիկը թողարկվել է ԱՄՆ ժողովրդի և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) օժանդակությամբ: Լրատվաթերթիկի բովանդակության համար պատասխանատու է միմիայն Կասալս Ենդ Ասոշիեյթս Ինք. ընկերությունը, և այն կարող է չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները:

ՀԳՄԾ-ն համագործակցում է Վերահսկիչ պալատի հետ՝ Հայաստանի աուդիտային կարողություններն ընդլայնելու նպատակով

Կոռուպցիոն գործողությունների հայտնաբերման և կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հզորացնել պետական աուդիտի կառույցները: ՀԳՄԾ-ն աջակցում է Վերահսկիչ պալատի (ՎՊ) աշխատանքներին՝ մշակելով և իրականացնելով հակակոռուպցիոն գործողություններ՝ ուղղված ՎՊ-ի աուդիտորական կարողությունների հզորացմանը, ինչպես նաև խթանելով Վերահսկիչ պալատի՝ որպես ՀՀ աուդիտի բարձրագույն հաստատության ղեկի կարևորմանը:

Վերահսկիչ պալատի ներկայացուցիչների հետ քննարկումներից հետո ՀԳՄԾ-ն հատկորոշել է տեխնիկական օժանդակության տրամադրման հնարավոր երեք ոլորտ՝ աուդիտի տեղեկատվություն և վերլուծություն, ՎՊ-ի դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում և անձնակազմի վերապատրաստում: ՀԳՄԾ-ն հրավիրել է միջազգային փորձագետի՝ Բուլղարիայի ազգային աուդիտի գրասենյակի նախկին նախագահ պրոֆ. Գեորգի Նիկոլովի՝ նշված բնագավառներին անդրադարձնելու նպատակով:

Մեկ ամսվա ընթացքում պրոֆ. Գեորգի Նիկոլովը պարբերաբար հանդիպումներ է անցկացրել ՎՊ-ի փոխնախագահի, խորհրդի անդամների և աուդիտորների հետ, որոնց ընթացքում ուսումնասիրվել է ՎՊ-ի փորձը, դիտարկվել են առկա խնդիրները և քննարկվել հետագա մարտահրավերները: Պրոֆ. Նիկոլովն իր զեկույցում ներկայացրել է մի շարք առաջարկություններ որոնք ուղղված են կոռուպցիայի դեմ պայքարում Վերահսկիչ պալատի կողմից առավել արդիական առաքելության և տեսլականի ընդունմանը: Ձեկույցում նաև ընդգրկված է վերապատրաստման կարիքների գնահատումը, առաջարկություններ՝ աուդիտորական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների վերաբերյալ: Պրոֆ. Նիկոլովը նաև օգնել է Բուլղարիա կատարվող ուսուցողական այցի կազմակերպման հարցում:

Գործում է ՀԳՄԾ-ի ինտերնետային կայքը

Ապրիլ ամսին ՀԳՄԾ-ն ստեղծել է www.maac.am ինտերնետային կայքը, որը ծառայում է որպես ծրագրային գործողությունների վերաբերյալ տեղեկատվության համապարփակ աղբյուր: Կայքի տարբեր բաժինները նվիրված են ՀԳՄԾ-ի կողմից թողարկվող լուրերին և հայտարարություններին, Շահերի պաշտպանության և օժանդակության կենտրոններին, ՀԳՄԾ-ի և պետական մարմինների, ինչպես նաև ՀԳՄԾ-ի և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությանը:

Ներկայում ինտերնետային կայքն օգտակար է հատկապես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, որոնք հետաքրքրված են ՀԳՄԾ-ի Տարեկան ծրագրային հայտարարությամբ՝ փոքր դրամաշնորհային ծրագրով: Այցելելով կայքը՝ հնարավոր հայտատուները կարող են գտնել համապարփակ տեղեկություններ հայտերի ներկայացման գործընթացի վերաբերյալ և ներքեռնել բոլոր անհրաժեշտ դիմումի ձևերը:

Բացի ծրագրի վերաբերող տեղեկություններից, կայքը նաև տրամադրում է հիմնական տեղեկատվություն կոռուպցիայի և դրա ձևերի մասին, կոռուպցիայից տուժողների և կոռուպցիայի հետևանքների մասին, ինչպես նաև տալիս օգտակար հղումներ:

Ինտերնետային կայքում պարբերաբար տեղադրվում են նաև ՀԳՄԾ եռամսյակային լրատվաթերթիկների էլեկտրոնային տարբերակները:

ՀԳՄԾ-ն օժանդակում է... 1-ին էջից

ԻԱԿ-ը կմիանա Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի Փորձագիտական խմբին և կօժանդակի նոր հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակմանը:

Դրամաշնորհի նպատակն է բարձրացնել ռազմավարության մշակման գործընթացի թափանցիկությունը, հասարակական իրազեկվածությունը և համագործակցությունը՝ փորձագիտական խմբին տեխնիկական աջակցություն տրամադրելու միջոցով: ՀԳՄԾ-ի օժանդակությամբ՝ ԻԱԿ-ը կմշակի հակակոռուպցիոն ռազմավարության բաժիններ, կկազմակերպի կլոր սեղանի հանդիպումներ քաղաքացիական հասարակության խմբերի հետ Երևանում և մարզերում, կանցկացնի հեռուստահաղորդումներ՝ ռազմավարության մշակման գործընթացը քննարկելու և լուսաբանելու նպատակով, ինչպես նաև կկազմակերպի մամուլի ասուլիսներ, որոնց ժամանակ հանրությանը կներկայացվեն ռազմավարության փաստաթղթի նախագծի տարբերակները:

«Սույն ծրագրի կարևորագույն հատկանիշն այն է, որ առաջին անգամ քաղաքացիական հասարակությունը ներգրավվում է հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործընթացում հենց սկզբից», ասել է ԻԱԿ-ի նախագահ Շուշան Դոյրոյանը: ՀԳՄԾ Ծրագրի ղեկավար Ֆրանսուա Վեզինան համաձայնում է. «Քաղաքացիական հասարակության մասնակցությունը խիստ կարևոր գործոն է ռազմավարության հաջողության համար, և ՀԳՄԾ-ն կշարունակի խթանել քաղաքացիական հասարակության և Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի փորձագիտական խմբի միջև երկխոսությանն ու համատեղ աշխատանքներին»:

Ծրագրի տևողությունն է՝ 2008թ. հունիսից դեկտեմբերը:



ՀԳՄԾ-ն իրազեկում է երիտասարդներին հակակոռուպցիոն պայքարի մասին

ՀԳՄԾ-ի համար թիրախային խումբ են հանդիսանում երիտասարդները. կոռուպցիայի երևույթն արմատախիլ անելու համար խիստ կարևոր է փոխել երիտասարդների մտածելակերպը, քանի դեռ կոռուպցիան լիովին չի արմատավորվել նրանց մտածելակերպի մեջ: Այնուամենայնիվ, հայ երիտասարդությունը, հատկապես մարզերում, հաճախ չի տիրապետում կոռուպցիայի, դրա բացասական ազդեցության և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների մասին տեղեկատվությանը:

Կոռուպցիայի երևույթն արմատախիլ անելու համար խիստ կարևոր է փոխել երիտասարդների մտածելակերպը, քանի կոռուպցիան լիովին չի արմատավորվել նրանց ապրելակերպի մեջ

Մինչ ՀԳՄԾ-ն նախատեսում է ապագայում իրականացնել երիտասարդական ուղղվածության մի շարք գործողություններ, ԱՄՆ ՄԶԳ/ԿԶԱ Երիտասարդության և համայնքների գործողության ծրագիրը վերջերս ՀԳՄԾ-ին ներկայացրել է «Երևանը հինգ օրում» քաղաքացիական կրթական ծրագրի միջոցով բոլոր մարզերի երիտասարդներին դիմելու հնարավորությունը: Հունիսի 23-ին ՀԳՄԾ-ի Մամուլի մասնագետը մոտ 35 ծրագրային մասնակիցներից կազմված խմբին տրամադրել է ներկայացում՝ կոռուպցիայի և դրա ազդեցության վերաբերյալ:



ՀԳՄԾ Մամուլի մասնագետ Արա Բրուտյանը խոսում է կոռուպցիայի բացասական ազդեցության մասին

Ներկայացման ընթացքում ՀԳՄԾ-ի Մամուլի մասնագետը բացատրել է կոռուպցիայի սահմանումը, դրա հիմնական դրսևորումները, երկարաժամկետ ու կարճաժամկետ ազդեցությունը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները: Ուսանողների հարցերի, դիտողությունների ու մեկնաբանությունների շնորհիվ ներկայացումն արագ կերպով վեր է ածվել բուռն քննարկման և կարծիքների համապատասխան փոխանակման: Ներկաները հստակ արտահայտել են իրենց նվիրվածությունը կոռուպցիայի դեմ պայքարին, քանի որ նրանցից շատերը դպրոցում և իրենց համայնքներում հանդիպել են կոռուպցիոն դրսևորումներին:

Ներկայացումը ստիպել է մասնակիցներին խորհել, որ իրենք՝ որպես ՀՀ քաղաքացի, պարտավոր են կերտել ժողովրդավարական հասարակություն: Ներկայացման վերջում հույս է արտահայտվել, որ ներկա գտնվող երիտասարդները, վերադառնալով իրենց համայնքներ, կկիսեն ձեռք բերված փորձն իրենց սերնդակիցների հետ և այդպիսով հակակոռուպցիոն ուղերձը կտարածեն նույնիսկ մարզի հեռավոր համայնքներում:

Հաջորդիվ, ՀԳՄԾ-ն կտրամադրի դրամաշնորհներ՝ երիտասարդությանն ուղղված հակակոռուպցիոն ծրագրերի շարք կազմելու համար, ինչը կօգնի տարածել երիտասարդությանն ուղղված հակակոռուպցիոն ուղերձը՝ հայ երիտասարդությանը կոռուպցիայի դեմ պայքարում համախմբելու նպատակով:

ՀԳՄԾ-ն վերանայում է Վերահսկիչ պալատի կարգավորիչ մեխանիզմները

Ցանկացած երկրի Վերահսկիչ պալատի գործառնություններն արդյունավետ իրականացնելու համար կարևոր դեր են խաղում վերահսկման չափորոշիչները և ուղեցույցները, էթիկայի և վարքագծի կանոնները: Համաշխարհային բանկի Հանրային ոլորտի արդիականացման ծրագրի օժանդակությամբ 2007թ. մշակվել են վերահսկողության չափորոշիչների, ձեռնարկների և էթիկայի կանոնների նախագծերը: Այնուամենայնիվ, ելնելով իր ընդլայնված նոր դերից՝ Վերահսկիչ պալատը հայցել է ՀԳՄԾ-ի փորձագետի աջակցությունը նշված փաստաթղթերի նախագծերի վերանայման հարցում, քանի դեռ դրանք չեն ներկայացվել հաստատման:

«...2007թ. մշակվել են վերահսկողության չափորոշիչների, ձեռնարկների և էթիկայի կանոնների նախագծերը, սակայն ՎԴ-ն հայցել է ՀԳՄԾ-ի փորձագետի աջակցությունը նշված փաստաթղթերի վերանայման հարցում...»:

Այսպիսով, ապրիլին ՀԳՄԾ-ի միջազգային փորձագետը՝ Ղուլանդիայից Ժամանած աուդիտոր պրո. Ժակ վան Քեմփենը, ուսումնասիրել է մշակված վերահսկողության չափորոշիչները, ձեռնարկները և էթիկայի կանոնները: Նախնական հետազոտությունից հետո պրո. վան Քեմփենը վերանայել է այդ փաստաթղթերը և ներկայացրել դրանց բարելավմանն ուղղված առաջարկություններ, գաղափարներ, որոնք քննարկվել են ՎԴ-ի պաշտոնյաների և աուդիտորների հետ: Նշված առաջարկությունները հավաստում են, որ ՎԴ-ի առաջիկա փաստաթղթերն իսկապես կբարելավեն ներքին կանոնակարգերը, ընթացակարգերը և օրենսդրական դաշտը՝ Հայաստանի արտաքին աուդիտին առավելապես օժանդակելու նպատակով:

ՀԳՄԾ-ն մասնակցում է Թբիլիսիում կայացած Հակակոռուպցիոն ցանցի հանդիպմանը

Հայաստանի ՀՈՒՄԳ-ի փորձագիտական խմբի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ԵԱՀԿ-ի, ՓՄԲՀ ՀԿ-ի և ՀԳՄԾ-ի ներկայացուցիչները մասնակցել են հունիսի 25-27-ը Վրաստանում՝ Թբիլիսիում, կայացած Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի 7-րդ գլխավոր ժողովին: ՀԳՄԾ-ից մեկնել է Ծրագրի ղեկավար Ֆրանսուա Վեզինան և միացել ավելի քան 100 կազմակերպությունների ներկայացուցիչներին հետևյալ երկրներից՝ Ալբանիա, Ադրբեջան, Բելոռուսիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Էստոնիա, Դազախստան, Դոմինիկյան Հանրապետություն, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Մոնտենեգրո, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա, Տաջիկստան և Ուկրաինա: Նշված միջազգային կազմակերպություններին դիմավորել են ՏՀԶԿ-ի, Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) և ԵՄ ներկայացուցիչները, բազմակողմ զարգացման բանկերի և գիտական շրջանակների անդամները, որոնք հավաքվել էին՝ շարունակելու տարածաշրջանում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ երխտությունը:



Հայաստանի ներկայացուցիչները Թբիլիսիում կայացած Հակակոռուպցիոն ցանցի ժողովին

Ժողովի ժամանակ անդրադարձել են միջազգային հակակոռուպցիոն կոմպենցիաներին և Հակակոռուպցիոն ցանցի տարածաշրջանում գործող մոնիտորինգի մեխանիզմներին, ինչպես նաև շոշափվել են հետևյալ թեմաները՝ մասնավոր ոլորտի դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում, բարդ ու ծավալուն կոռուպցիոն դեպքերի քննությունն ու հետապնդումը, կոռուպցիայի կանխարգելումը շահերի բախման կառավարման և պետական պաշտոնյաների գույքի հայտարարագրման միջոցով, ինչպես նաև հակակոռուպցիոն օրակարգին ուղղված հասարակական օժանդակության համախմբման ձևերը:

Մասնակիցները ծանոթացել են Վրաստանի՝ կոռուպցիայի դեմ պայքարի վերջին տարիների փորձին, որը ներկայացվել է Վրաստանի պետական պաշտոնյաների կողմից, մինչդեռ դոնոր կազմակերպությունները կիսել են իրենց տեսակետները՝ տարածաշրջանի հակակոռուպցիոն գերակայությունների և պլանավորված գործողությունների վերաբերյալ: Հակակոռուպցիոն ցանցի Մշտական խումբը նաև քննարկել է ՀՅ-ի ապագա գործողությունները, ներառյալ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողության ծրագիրը: Բացի պաշտոնական ծրագրից, ժողովը նաև օգտակար ֆորում է հանդիսացել տարածաշրջանի և ողջ աշխարհի հակակոռուպցիոն գործողությունների վերաբերյալ տեղեկատվության ոչ պաշտոնական փոխանակման համար:

Հաջորդ թողարկման հիմնական թեմաները...

ՀԳՄԾ-ի հաջորդ եռամսյակային լրատվաթերթիկը կներկայացնի տեղեկատվություն հետևյալ իրադարձությունների վերաբերյալ և ավելին.

- ՀԳՄԾ-ն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անձնակազմի համար կազմակերպում է Մարդու իրավունքների և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ աշխատաժողով
- ՀԳՄԾ-ն կազմակերպում է Հայաստանի միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների վերաբերյալ հակակոռուպցիոն ֆորում
- ՀԳՄԾ-ն Վերահսկիչ պալատի անձնակազմի համար կազմակերպում է ուսուցողական այց՝ օգնելու պաշտոնյաներին զարգացնելու Վերահսկիչ պալատի ինքնությունը որպես Հայաստանի աուդիտի գերագույն մարմին